




**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՆ
«Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՍՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒԴԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ**

**ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԶՈՒԹԵԱՆՑ
ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ
ՀԱՄԱՅՆ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ**

Փրկչի եւ մեր Տիրոջ Իշման Սուրբ Սեղանի առջեւ գոհութեան աղօթքով ու մաղթանքով գալիս ենք ծանուցելու, որ ընդառաջ Հայրապետական Մեր հրաւերին՝ մեր Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին երկար տարիներ զօրակից մի խումբ բարերարների ազնիւ յանձնառութեամբ 2005 թուականին Ամերիկայի Միացեալ Նահանգներում հաստատուել է «Սուրբ Էջմիածնի բարեկամներ» հիմնադրամը, որպէսզի մշտական նեցուկ եւ ապաւինութիւն դառնայ համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռին:

Փառք Երկնաւորին, որ ականատես ենք Սուրբ Էջմիածնի առաքելութեանը զօրավիգ լինելու այսպիսի վկայութեան՝ որդիական անաղարտ սիրոյ ու հաւատարմութեան: Այս նուիրումով տասնեօթ դար մեր ժողովուրդը պահպանեց Սուրբ Էջմիածինը՝ Թաքոր լեռը հայ հոգու, համայն հայ կեանքի պայծառակերպութեան, Սինայ լեռը հայոց, որտեղից Միածնի Էջքով Աստուած խօսեց մեր ժողովրդի հետ: Աստուծոյ հետ

հայոց ուխտի խորհրդով Սուրբ Էջմիածինը եղաւ մեր ժողովրդի հոգեւոր կեանքի ակունքը, որն ինչպէս շարականագիրն է ասում՝ ճանաչեցինք շտեմարան ու բաշխող աստուածային շնորհների եւ դասանեցինք մայր, ծնող ու դաստիարակ հայոց եկեղեցիներին: Մեր պատմութեան դժուարին ճանապարհներին Սուրբ Էջմիածինը առաջնորդեց, մէկ ու ամբողջական պահպանեց մեր ժողովրդին: Երբ Հայրենիքում հալածեալ եղանք, երբ տարագիր եղանք օտար ափերում, Փրկչի Իջման նուիրագործուած Խորանից հայոց հոգիներին միշտ շողաց փրկութեան լոյսը եւ յոյս ու զօրութիւն պարգեւեց ապրելու եւ վերածնունդի:

Արդ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, հրաւեր ու յորդոր ենք ուղղում ձեզ ի Հայաստան եւ ի Սփիւռս՝ ձեր նուիրատուութիւններով զօրավիգ լինելու նորահաստատ հիմնադրամին: Ձեր աջակցութեամբ պիտի կառուցուեն նոր եկեղեցիներ եւ յառնեն խոնարհուած սրբատեղիներ, որոնք դեռեւս բազմաթիւ են Հայրենիքում եւ երբեմնի հայաշատ, բայց ժամանակի ընթացքում այլեւս տկարացած գաղթավայրերում: Հոգեւոր կրթական հաստատութիւնները ծառայութեան պիտի ճամփեն առատ հունձք եկեղեցականների, ովքեր մեր Եկեղեցու թեմերում պիտի համալրեն հոգեւոր սպասաւորների շարքերը: Պիտի վերակազմակերպուեն եկեղեցական ծխական համայնքները Հայրենիքում եւ Սփիւռքի նոր ձեւաւորուող հաստատութիւններում: Կեանք պիտի առնեն մշակութային, կրթական ծրագրեր, հրատարակութիւններ եւ ամեն ջանք պիտի առատանայ, որպէսզի անմար մնան մեր ժողովրդի կեանքում հաւատն ու յոյսը, եւ միշտ ապրեն մեր հայրերի աւանդները, ոգին ու նուիրումը: Լինենք անվարան հետեւորդները մեր հայրերի, ովքեր Աստուծոյ կոչին հաւատարիմ հաստատեցին ու պահպանեցին Սուրբ Էջմիածինը:

Հայցում ենք առ Աստուած, որ օրինի արդար յիշատակը Սուրբ Էջմիածինը նորագողների ու բարեգարդողների, դարերի մէջ Սուրբ Էջմիածնի համար անդուլ տքնողների: Այլեւ օրինի իրենց ընտանեօք հանդերձ Սուրբ Էջմիածնի բարերարներին, Մայր Աթոռի պայծառութեանը ջանք ու նուիրում բերողներին:

Թող բազմաշնորհ ու ամենախնամ օրհնութիւնը Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու միշտ եւ յանապազ ձեզ հետ լինի եւ Սուրբ Էջմիածնի անմար լոյսի մէջ պահպանի ազգս հայոց զօրացեալ հաւատով ու հայրենեաց սիրով՝ լինելու միշտ ժառանգութիւն անկորուստ ու պտղաբեր:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեւեան: Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28 Սեպտեմբերի
Յամի Տեառն 2007 եւ ի թուին Հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 435